

## ԿԱՐԵՎՈՐ ԵՌԱԼԵԶՎՅԱՆ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Գ. Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան կենսաբիմիայի ինստիտուտ

Պրոֆեսոր Ա. Սիմոնյանը և դոցենտ Ի. Բատիկյանը լույս են ընծայել Անգլե-րեն-ռուսերեն-հայերեն կենսաբանական բառարան, որի անհրաժեշտությունը վաղուց կար: Վերջին տասնամյակներն աչքի ընկան կենսաբանության տարրեր բնագավառներում ծեռօք բերած գիտական ակնառու հաջողություններով: Աննա-խաղեա գիտական առաջընթաց է կատարվել կենսաբիմիայի, մոլեկուլային կեն-սաբանության, գենետիկայի, կենսաֆիզիկայի և կենսաբանության այլ բնագա-վառներում: Ժամանակակից կենսաբանական գրականությունը հարստացել է բազմաթիվ տերմիններով, որոնք երևան են եկել միայն վերջին տարիներին, իսկ նախկինում օգտագործված շատ տերմիններ ստացել են նոր նշանակություն, ինչպես նաև որոշ դեպքերում հնացել են: Միջազգային մշտական կապերի ըն-դարձակման շնորհիվ զգալիորեն աճել է կենսաբանական գիտական ինֆորմա-ցիայի փոխանակումը և հայերեն լեզվով դրա ճիշտ բարգմանության անհրաժեշ-տությունը: Սակայն հայերեն լեզվով ընդգրկուն կենսաբանական բառարանի բացակայությունը դժվարացնում է այդ գործը:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող Անգլերեն-ռուսերեն-հայերեն կեն-սաբանական բառարանը նպատակ ունի լրացնելու այդ բացը: Բառարանը պա-րունակում է կենսաբանության տարրեր բնագավառներին՝ բուսաբանությանը, կենդանաբանությանը, գենետիկային, կենսաբիմիային, կենսաֆիզիկային, մոլե-կուլային կենսաբանությանը, անատոմիային, ֆիզիոլոգիային, ձևաբանությանը, կարգաբանությանը, էկոլոգիային, մակարուժաբանությանը, մանրէաբանությա-նը, ախտաբանությանը, կենսաչափությանը, կենսաշխարհագրությանը վերաբե-րող ավելի քան 80000 տերմին և տերմինային անվանում, ինչպես նաև բույսերի, կենդանիների, սնկերի և այլ օրգանիզմների անվանումներ՝ իրենց լատիներեն համարժեքներով:

Յեղինակները լինելով այդ բնագավառի երկար տարիների վաստակաշատ մասնագետներ՝ բազմամյա, հսկայական աշխատանք են կատարել նյութի հա-վաքնան, բառարանային մշակման և երեք լեզուների հարաբերությամբ գրեթե անթերի հերթակարգման ուղղությամբ, որն անշուշտ գնահատելի է և արժանի է ամենայն ուշադրության:

Անբողջական և սպառիչ է եռալեզվյան սույն բառարանի հայերեն գուգակցու-մը նյութ համարժեքների հետ: Ըստ էության հաջողված է գիտաճյուղային տեր-մինների և տերմինային անվանումների հավաքագրումը տեսական և այլ կարգի գրականությունից, նաև հայերեն, ռուսերեն և անգլերեն տարրեր բնույթի (բա-ցատրական, թարգմանական և այլն) բառարաններից: Միաժամանակ կան հայե-րեն նոր տերմիններ և բույսերի, կենդանիների տեսակների ու ենթատեսակների նոր անվանումներ, որոնք կազմված են անգլերեն, ռուսերեն և լատիներեն հա-մարժեքներին համապատասխան: Դրանք հաջողված կազմություններ են և կա-

րող են գործածելի լինել համապատասխան բնագավառում:

Բառարանը կազմված է որոշակի հմտությամբ, բարեխորդեն: Ընթերցողին է ներկայացվել արժեքավոր եռալեզվան կենսաբանական մասնագիտական բառարան, որը իր բառացանկով, հայերեն լեզվով կենսաբանական միասնական տերմիններ ստեղծելու առումով հայ բառարանագրության մեջ առաջին ու նախադեպը չունեցող աշխատություն է: Այն նախատեսված է համապատասխան մասնագետների ու ուսանողների լայն շրջանի համար և մեծապես կօգնի կենսաբանական միասնական տերմինաբանություն կիրառելու, ինչպես նաև անգլիալեզու և ռուսալեզու գիտական տերմինները հայերեն ճիշտ բարգմանելու գործին, դրանով իսկ նպաստելով կենսաբանության զարգացմանը:

## ВАЖНЫЙ ТРЕХЯЗЫЧНЫЙ БИОЛОГИЧЕСКИЙ СЛОВАРЬ

*G. A. Геворгян*

Представлена обширная рецензия об Англо-русско-армянском биологическом словаре проф. А. Симоняна и доц. И.Г. Батикян.

## IMPORTANT BIOLOGICAL TRILINGUAL DICTIONARY

*G. A. Kevorkian*

An extensive review about the English-Russian-Armenian dictionary of Prof. A.A. Simonyan and Associate Prof. I.G. Batikyan is presented.

## ИЗМЕНЕНИЕ АКТИВНОСТИ ЩЕЛОЧНОЙ ФОСФАТАЗЫ И НЕОРГАНИЧЕСКОЙ ПИРОФОСФАТАЗЫ В РАЗНЫХ ОРГАНАХ БЕЛЫХ КРЫС ПОД ВЛИЯНИЕМ ГАЛАРМИНА И ЕГО ПРОИЗВОДНЫХ

**Л. П. ТЕР-ТАТЕВОСЯН**

*Кандидат биологических наук, старший научный сотрудник отдела биохимии нейрогормонов Института биохимии имени Г. Буннатяна*

**Л. Н. АРАКЕЛЯН**

*Кандидат биологических наук, доцент, профессор ГГУ*

**А. А. ГАЛОЯН**

*Академик НАН РА,*

*заведующий отделом биохимии нейрогормонов Института биохимии имени Г. Буннатяна*

Фосфомonoэстеразы по праву можно отнести к числу самых распространенных ферментов, осуществляющих в организме важную физиологическую функцию ввиду